



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ



«*12*» *06* 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 60

Ձեռնարկողը՝

<<Էրեբունի շուկա>> ՍՊԸ
Ք. Երևան, Էրեբունու փող. 17/1

Գործունեությունը՝

Էրեբունի վարչական շրջանում գոյություն ունեցող առևտրի կենտրոնի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ քաղաք Երևան

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 60

<22> 06 2018թ.

**Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանում գոյություն ունեցող
առևտրի կենտրոնի վերակառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝	<<Էրեբունի շուկա>> ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ/Գ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Էրեբունի համայնք

<<Էրեբունի շուկա>> ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է վերակառուցել և ընդլայնել Էրեբունի վարչական շրջանում գոյություն ունեցող առևտրի կենտրոնը, որի նախնական գնահատման հայտը պահանջվող փաստաթղթերով ներկայացվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: Նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետի կողմից տրված՝ թիվ 01/18-07/1-Մ-3176-303 տրվ. 07.05.2018թ. նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/:

Առևտրի կենտրոնի մասնաշենքը նախատեսված է վերակառուցել և ընդլայնել Էրեբունի վարչական շրջանի, Էրեբունի փողոց հ.հ. 15, 17/1, 17/2, 17/3, 17/4, 17/5, 17/7, 17/9, 19/5, 19/11, 19/12, 19/13, 19/14, 19/15, 19/16 հասցեներում հատկացված հողատարածքում: Շինությունն իրենից ներկայացնում է միաձույլ ե/բետոնե կարկաս: Նախագծված շինությունը 4 հարկանի է, հատակագծում ունի՝ 108.8 մ x 133.9 մ առանցքային չափեր: Առևտրի կենտրոնի ավելացող մասի ընդհանուր մակերեսը կազմում է 5.100 մ² (յուրաքանչյուր հարկում), շինարարության տևողությունը հաշվարկված է 24 ամիս:

Շինարարությունը նախատեսվում է կատարել 2 փուլերով՝ նախապատրաստական և հիմնական: Նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում
- ժամանակավոր էլեկտրամատակարարում և ջրամատակարարում
- շինանյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- շինհրապարակի գիշերային լուսավորվածություն
- շինհրապարակի հակահրդեհային անվտանգության գոյությունը ապահովում:



Հիմնական փուլում նախատեսվում է կատարել շենքի շինարարությունը՝ սահմանված ժամանակացույցի և օրացուցային գրաֆիկի համապատասխան:

Հողային աշխատանքները փոսորակում և խրամուղիներում կատարվելու են <<հետ-բահ>> էքսկավատորով: Բնահողը ավտոինքնաթափների միջոցով պետք է տեղափոխվի 13-15 կմ հեռավորության վրա: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվելու է ձեռքով՝ ձեռքի պարզագույն գործիքներով, փոքր մեխանիզմներով: Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոսորակի ընդունման ակտ):

Շենքի պատող և կրող կոնստրուկցիաների իրականացման համար ընտրված է ԿԵ-405 մակնիշի մեկ վերամբարձ կոունկ: Շենքի պատող և կրող կոնստրուկցիաների իրականացման համար ընտրված է 2 թրթուրավոր կոունկ: Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները անհրաժեշտ է կազմակերպել և մշակել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները կատարվելու են ազդարարի ազդանշանին համապատասխան՝ պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Հայտում ներկայացվել շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ շինանյութերի, բնառեսուրսների քանակական և որակական կազմի, նախատեսվող շինարարական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, որոնց հիման վրա վերլուծվել է նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունները:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման և բետոնային աշխատանքների հետ: Այդ աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն արտանետումների հետ, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընացքում՝ փոշու ձևով և դիզելային վառելիքի այրման արդյունքում առաջացող արտանետումներով:

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով հայտում մշակվել է Բնապահպանական ռիսկերը մեղմացնող միջոցառումների ծրագիր:

Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- շինարարական հրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- պարտադիր կարգով շինանյութերը, ավելցուկ գրունտը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- սորուն նյութերը (ավազ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- պարբերաբար իրականացվելու է տեխնիկայի շարժիչների կառավարում,
- չոր եղանակների ժամանակ իրականացվելու է հիմնականում փակ տարածքներում կամ տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում:



Հողաձածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով սախատեսված է ընթացքում տարածքի բուսահողը հանել և կույտավորել պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար,

- ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի ,

- բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր:

- շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:

Ջրային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի ակնկալվում և արտահոսքեր չեն առաջանում:

Շինարարության փուլի ջրամատակարարումն իրականացվելու է գոյություն ունեցող ջրատարից, որը միացված է քաղաքային ջրամատակարարման ցանցին: Ջուրն օգտագործվելու է տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար: Կոյուղին միացված է քաղաքային կոյուղատարին: Չնայած կոյուղին վերակառուցվելու է, սակայն բանվորների սպասարկման շինությունում այն կգործի:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա մասնաշենքի ընդլայնման աշխատանքների ընթացքում, շինարարական աղբն է, որը նախատեսվում է տեղափոխել Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված աղբավայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

Եզրահանգում՝ Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է ժամանակավոր բնույթ: Փորձաքննության ընթացքում նախնական գնահատման հայտի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցների և Երևանի քաղաքապետարանի կողմից նախատեսվող գործունեության իրականացումն արժանացել է հավանության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Էրեբունի շուկա>> ՍՊԸ կողմից նախատեսվող Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանում գոյություն ունեցող առևտրի կենտրոնի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ



Հ. Մկրտչյան